ՄԷՅՐԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ ՂԱՋԱՐԵԱՆ

ՏԻՐԱՄՕՐ ԿԵՐՊԱՐԸ ՄԵՒԱՅՈՒՍՅԷ ՇԱՐԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Սուրբ Մարիամ Աստուածածինը մարդկային մտայնութեան մէջ մշտապէս եղել եւ մնում է իբրեւ, կուսական անաղարտութեան, անապականութեան չափանիշ, գեղեցկութեան ու հեզութեան կատարելատիպ եւ, բնականաբար, ներշնչանքի անսպառ աղբիւր: Համաշխարհային քրիստոնէական մշակոյթի սաղմնաւորման պահից իսկ Սուրբ Մարիամի՝ Սիօնի Դստեր կերպարը եղել է բազմաթիւ արուեստագէտների ուշադրութեան կենտրոնում: Նրա կերպարի շուրջ ստեղծուել են հոյակերտ քանդակներ, որմնանկարներ ու կտաւներ, տաղեր, աղօթքներ, ներբողեաններ: Նրա անուան շուրջ՝ հիւսուել են ժողովրդական զանազան աւանդազրոյցներ:

Եկեղեցական սրբազան աւանդութիւնը Տիրամօրը համարում է սրբերի գլուխ եւ դասում հրեշտակներից վեր. աստուածային նուիրապետութեան մէջ Սուրբ Կոյսը ստորադասւում է միայն Ս. Երրորդութեանը: Աւանդութեան համաձայն՝ Տիրամօրն առաջին անգամ պատկերել է Յովհաննէս առաքեալը՝ փայտի վրայ, իսկ Բարդուղիմէոսն այդ պատկերն իր հետ բերել է Հայաստան:

Քրիստոնէական արուեստի ձեւաւորման ժամանակներից սկսած Ս. Կոյսը եղել է պատկերագրութեան կենտրոնական ֆիգուրներց մէկը: Գեղարուեստի մէջ Աստուածամօր կերպարը հանդիպում է Աւետման, Ծննդեան, Համբարձման, Հոգեգալստեան, Խաչից իջեցման, Թաղման եւ այլ թեմաներով ստեղծուած պատկերներում:

Հայկական եկեղեցիների աւագ խորանին սովորաբար պատկերուած է լինում Տիրամայրը մանուկ Հիսուսի հետ: Վերոյիշեալ թեման լայն տարածում է ունեցել միջնադարեան Հայաստանի մանրանկարչական դպրոցներում: Աւելի ուշ մեզանում այդպիսի հրաշալի գործեր են ստեղծել նաեւ Յովնաթան Յովնաթանեանը («Տիրամայրը մանկան հետ»), Վարդգէս Սուրէնեանցը («Աստուածամայրը գահի վրայ») եւ այլք:

Զանազան ոճերով ներկայումս էլ Աստուածամօրը նուիրուած կտաւներ են ստեղծում՝ կերպարի արդիական մեկնաբանութիւններով, դրա վառ օրինակն են նկարիչ Ժանսեմի (Յովհաննէս Սեմերճեան) «Մայրութիւն» շարքի գործերը կամ «ամենադալլիական» տիպողոսին արժանացած Օնիկ Սահակեանի «Տիրամայրը մանկան հետ» սիւրռեալիստական ստեղծագործութիւնը եւ այլն:

Վաղ քրիստոնէական շրջանից սկսած Աստուածամօրն են նուիրուել պարզունակ ներբողեաններ ու տաղեր, «Աւէ Մարիա»-ներ են գրել եւրոպական մի շարք բարձրակարգ կոմպոզիտորներ (Շուբերտ, Կաչինի եւ այլն):

Բացի մեծացուցէներից շարակնոցում տեղ գտած միւս երգերում նոյնպէս կարելի է տեսնել բազմաթիւ այլ հատուածներ, որոնք նուիրուած են Տիրամօրը: Շարակնոցում Տիրամայրը հանդէս է գալիս իբրեւ հոգեւոր բարձրագոյն տիպար, իբրեւ սրբութեան եւ առաքինութեան մարմնացում: Այստեղ Տիրամայրն անտիկ բարձրաքանդակների նման անշարժ է, անզգացմունք, եւ ընդհանրապէս զուրկ երկրային կրքերից:

ԳՐԱԴԱՐԱՆ

Մեծացուցէները եւս աղքատիկ են իրենց զգացմունքայնութեամբ ու խոհականութեամբ, բայց ընդհակառակը՝ հարուստ աստուածաբանական խորքով, մի բան, որով բնորոշւում է միջնադարեան հայ բանաստեղծութիւնը: Տիրամայրը մեծացուցէներում օժտուած է գերբնական հատկանիշներով. կերպարի գեղարուեստական պատկերաւորումը պայմանաւորուած է աստուածաբանական եզրաբանութեամբ եւ դաւանաբանութեան շեշտադրումով:

Տիրամայրը մեծացուցէների կենտրոնական կերպարն է եւ հանդէս գալիս մի քանի երեսներով. մերթ իբր փառաբանուող բարձրագոյն էակ, մերթ իբրեւ մեծագոյն բարեխօս: Սակայն այս կերպարն առաւելաբար հանդէս է գալիս իբրեւ գեղեցկութեան բարձրագոյն մի չափանիշ, եւ նրան նկարագրելն ու գովերգելը դառնում է այն հիմնական ատաղձը, որով հեղինակը հիւսում է իր ներբողը:

Անարատ Կոյս Աստուածածին Մարիամ սրբուհի եւ մայր Քրիստոսի, յարգանքի տարար զանտանելին ամենեցունց, օրհնութեամբ զքեզ մեծացուցանեմք[1]:

Բերուած օրինակն այս առումով չափազանց դիպուկ է: Բացի այդ, ունի նաեւ մի շատ կարեւոր առաւելութիւն: Ինչպէս տեսանք, մեծացուցէներում Տիրամօր կերպարն առաւելաբար մեզ ներկայանում է մակդիրաւոր արտայայտութիւնների միջից, որոնք բաւական ստուար թիւ են կազմում: Բերուած օրինակում մէկտեղուած են Աստուածամօրը գովաբանող ամենահիմնական մակդիրներից չորսը՝ *«Կոյս», «Աստուածածին», «սրբուհի»* եւ *«մայր»*:

Արժէ այստեղ անդրադառնալ թէ՛ վերոյիշեալ չորս հիմանական եւ թէ՛ Տիրամօր կերպարի քննութեան հարցում ոչ պակաս կարեւոր միւս մակդիրներին՝ փորձելով ներթափանցել դրանց իմաստային խորքերը:

Տիրամօր կուսութեան թեման մեծացուցէներում ամենայաճախադէպ կիրառութիւն գտած շեշտադրումներից է: Բացի այն, որ մի քանի դէպքերում շարականն ուղղակի ծաւալում է այդ թեմայի շուրջ, կուսութեան վերաբերեալ ակնարկը՝ մասնաւորաբար Սուրբ աստուածածնին բնորոշող «կոյս» մակդիրը հանդիպում է ամենուր, օրինակ՝ Քրիստոսի Ծննդեան առաջին օրուայ կանոնի մեծացուցէի երկրորդ տունը.

Զքեզ, լուսոյ մայր եւ կոյս. զքեզ, գանձդ կենաց, աստուածային ձայնիւ ցնծութեամբ մեծացուցանեմք (Ծ., էջ 25):

Ճիշտ է՝ կուսութիւնը Տիրամօր ամենաէական բնորոշումներից է, բայց, այնուամենայնիւ բազմաթիւ շարականներում այն ո՛չ թէ գործածւում է որպէս արտացոլման առաջնակարգ իրողութիւն, այլ որպէս որեւէ մակդիրաւոր կառոյցի բաղադրիչ մաս, օրինակ նոյն՝ կանոնի երրորդ օրուայ մեծացուցէի առաջին տան մէջ. *«սուրբ կոյս անհարսնացեալ Մարիամ»* (Ծ., էջ 32): *«Կոյս եւ մայր»* ընկալում առկայ է նոյն կանոնի չորրորդ օրուայ մեծացուցէում (Ծ., էջ 37-38) եւ նորից *«բարեխօս կոյս անհարսնացեալ»*՝ Յարութեան *«Ո՛վ գերահրաշ ծաղիկ»* սկսուածքով շարականում (Ծ., էջ 58-59): Հանդիպում է նաեւ *«միշտ կոյս»*[2], *«սուրբ կոյս»*[3] եւ այլ ձեւերով:

---

1 «Շարական հոգեւոր երգոց Սուրբ եւ Ուղղափառ Եկեղեցւոյս Հայաստանեայց», Ս. Էջմիածին, 1861, էջ 63 (այսուհետեւ Շարակնոցից յղումները կտրուեն շարադրանքի մէջ):

2 «Շարական» Մեծացուցէ Յարութեան Տեառն, էջ 57 (հանդիպում է երկու անգամ) եւ Քրիստոսի Ծննդեան երկրորդ օրուայ կանոնում. էջ 29-30 եւ այլն:

3 Այս արտայայտութիւնը Ծննդեան եօթներորդ օրուայ կանոնի մեծացուցէներում օգտագործուած է երեք

Աստուածածին բնորոշումը (յուն.՝ թեոտոկոս) առաջին անգամ պաշտօնապէս Տիրամօրը տրուել է Եփեսոսի Տիեզերաժողովից յետոյ՝ 433-ին, երբ Ալեքսանդրեան եւ Անտիոքեան աթոռները Քրիստոսի բնութիւնների վերաբերեալ ընդունեցին մէկ համատեղ խոստովանութիւն[4]: Այս եզրը մեծացուցէներում այնքան էլ լայն կիրառութիւն չի գտել: Հետաքրքրական է, որ այն շարականագրի կողմից գործածուել է Սուրբ Աստուածածնի Աւետման կանոնի թէ՛ մեծացուցէ եւ թէ՛ ճաշու միաւորներում՝ *«Մարիամ սուրբ կոյս»* կառոյցի ներսում (մեծացուցէի պարագային) (Շ., էջ 15) եւ առանձին՝ ճաշու շարականի առաջին տան սկզբում (Շ., էջ 17): Աստուածածին եզրն օգտագործում է Վարդավառի առաջին օրուայ կանոնում՝ *«սուրբ Աստուածածին»* (Շ., էջ 451) եւ Քրիստոսի Ծննդեան կանոնում՝ *«Աստուածածին եւ սրբուհի»* (Շ., էջ 40) ձեւերով:

Ծննդեան երրորդ օրուայ կանոնի ճաշու միաւորի տակ զետեղուած մեծացուցէի կրկնակը նոյն բնորոշումն օգտագործում է մի փոքր այլ տարբերակով.

...զքեզ մեծացուցանեմք արժանապէս երգով, Աստուածամայր եւ Կոյս (Շ., էջ 33-34):

...զքեզ աստուածածին եւ կոյս, բարեբանեմք... (Շ., էջ 37):

Տիրամօրը բնութագրող էական ստորոգելիներից է *«սուրբ»* (*«սրբուհի»*) տիտղոսը: Մեծացուցէներում այդ մակդիրը շատ յաճախ հանդիպում է յատկապէս «սուրբ կոյս», «սուրբ Աստուածածին», «մայր սուրբ» եւ այլ նմանատիպ կառոյցներում՝ Տիրամօր վերոյիշեալ բնորոշումների համար իր հերթին ստորոգելի հանդիսանալով: Հակառակ սրան «սրբուհի» արտայայտութիւնը հանդիպում է աւելի սակաւ.

Որ զԲանն Աստուած յարգանտի կրեցեր սրբուհի անարատ (Շ., էջ 62):

...Այսօր Մարիամ սրբուհին ի փառս քո, Քրիստոս, ծագեաց մեզ լոյս յորդւոց օրինաց (Շ., էջ 9):

Իսկ Տիրամօր մայրութեան թեման մեծացուցէներում արտայայտուած է մի քանի երանգաւորումով: Մի դէպքում նա պարզապէս *«Քրիստոսի մայր Աստուծոյ մերոյ»* (Շ., էջ 66) է, *«մայր Էմմանուէլի»* (Շ., էջ 60) ու *«Սրեղծողին մայր»* (Շ., էջ 28): Այս շարակարգում չափազանց հետաքրքրական ու հնարամիտ յօրինուածք ունի Տիրամօր ծննդեան կանոնի մեծացուցէն, որում Սուրբ Կոյսի վերաբերեալ նախ ասւում է, թէ նա իբրեւ դուստր պարգեւուեց նահապետներին, որից յետոյ նրան անուանում է *«աղախին եւ մայր, կենաց աջոյն ծնօղ Հօր Միածնին»* (Շ., էջ 4): Ծածուկ կերպով ներքին հակադրութեան մէջ դնելով *«դուստր»* եւ *«մայր»* բառերը, շարականագիրն այստեղ կարողացել է հասնել Տիրամօր «մայր» լինելու հանգամանքի աւելի ընդգծուած մատուցման:

Ինչպէս տեսանք, այս շարականներում Տիրամայրը ներկայացուած է որպէս «Քրիստոսի մայր»: Նոյն գաղափարը, սակայն արդէն այլաբանական արտայայտչաձեւերով եւս բաւական լայն տարածում ունի մեծացուցէներում: Քրիստոսի վերաբերեալ Յովհաննու Աւետարանի Ը 12 համարը՝ «Ես եմ լոյս աշխարհի. որ գայ զկնի իմ՝ ընդ խաւար մի՛ գնասցէ, այլ ընկալցի զլոյսն կենաց», ինչպէս նաեւ հաւատամքային «լոյս ի լուսոյ» բնորոշումը, պատճառ

անգամ:

4 Այս մասին աւելի մանրամասն տե՛ս **Եղնիկ արք. Պետրոսեան**, Հայ Եկեղեցու պատմութիւն, մասն Ա, Ս. Էջմիածին, 2002, էջ 59-62:

են դարձել, որ բազմաթիւ շարականներում Տիրամայրը կոչուի *«մայր լուսոյ»* (Շ., էջ 60, 63, 142, 366) կամ *«լոյս, լուսոյ մայր»* (Շ., էջ 28):

Հետեւեալ շարականն ամբողջութեամբ փոգորուած է Սուրբ Կոյսի մայրութեան գաղափարով.

Զանձառելի լուսոյ մայր եւ զբնակարան անսկզբնակից Որդւոյն, օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զանհաս տնօրէնութեան մայր եւ զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին, օրհնութեամբ մեծացուցանեմք:

Զբոլորից փրկութեան մայր, որ զանպանելին էից ի յարգասի եբարձ, զնա ամենեքեան օրհնութեամբ մեծացուցանեն (Շ., էջ 21-22):

Այստեղ Տիրամայրն անուանում է նաեւ *«Զանհաս տնօրենութեան մայր»*, որն ըստ Հայր Գաբրիէլ Աւետիքեանի նշանակում է՝ մայր մարդեղութեան անհասանելի խորհրդի: Իսկ *«Զբոլորից փրկութեան մայր»* նշանակում է՝ մայր Քրիստոսի, որ բոլորի փրկութիւնն է, կամ մայր համընդհանուր փրկութեան, որովհետեւ ծնելով Քրիստոսին՝ Սուրբ Մարիամը գործակից եղաւ նրա փրկարար գործին[5]: Ի դէպ, Տիրամօրը *«փրկութեան մայր»* է անուանում նաեւ Քրիստոսի ծննդեան առաջին օրուայ մեծացուցէն (Շ., էջ 25), իսկ Յարութեան մեծացուցէներից մէկում Սուրբ Մարիամը կոչում է *«մայր կենդանութեան»* (Շ., էջ 10): Հայր Գաբրիէլ Աւետիքեանն այս արտայայտութեան ենթատեքստում ներքին նուրբ հակադրութիւն է տեսնում նախամայր Եւայի կերպարի նկատմամբ, քանի որ, ինչպէս բացատրում է՝ Եւան նոյնպէս կենդանիների մայր էր, սակայն Եւան մարդկանց ծնում էր մահուան համար, իսկ ծնելով Քրիստոսին՝ Սուրբ Կոյսը բոլոր մարդկանց անմահութիւն պարգեւեց[6]: Խնդրոյ առարկայ շարականի դարձի մէջ երեւան է գալիս Աստուածամօր խոնարհութիւնն ու աստուածային վեհութիւնը. *«... մայր եւ աղախին, մեծացուցանեմք»:*

Մայրութեան թեման այսքանով չի սահմանափակւում. շարականներից մէկում Տիրամայրն անուանում է «ծնող Արարչին».

Զքեզ, ամէնօրհնեալ Աստուածածին, մայրդ լուսոյ եւ առագաստ Աստուծոյ Բանին, մեծացուցանեմք:

Զքեզ, պայծառ երկինք եւ ամպ լուսեղէն, ծնօղ արարչին եւ մորենի անկիզելի, մեծացուցանեմք:

Զքեզ, դուռն երկնից եւ ճանապարհ արքայութեան, բարձող անիծից եւ արօրէ հողեղէն, մեծացուցանեմք (Շ., էջ 59-60):

Ի դէպ, այս շարականը պարզապէս կազմուած է կողք-կողքի դասաւորուած մակդիրաւոր արտայայտութիւններից: Մենք արդէն տեսանք, որ յաճախ շարականներում հանդիպող մակդիրաւոր արտայայտութիւններ բացատրւում են. օրինակ՝ Յարութեան ԱԿ մեծացուցէներից մէկը սկսւում է *«Անարատ տաճար»* արտայայտութեամբ, որն անմիջապէս բացատրւում է՝ *«բնակարան անբաւ Բանին Աստուծոյ»* (Շ., էջ 58): Իսկ վերը բերուած

5 Հմմտ. «Բացատրութիւն շարականաց, որք պաշտին ի հասարակաց ժամանակարգութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ», աշխատասիրեալ Տեառն Գաբրիէլի Աւետիքեան, Վենետիկ, 1814, էջ 59 (այսուհետ՝ Բացատրութիւն շարականաց):

6 Հմմտ.՝ Բացատրութիւն շարականաց, էջ 100-101:

շարականին բնորոշ է մակդիրաւոր արտայայտութիւնների «չպատճառաբանուած», յախուռն կուտակումը, նոյնիսկ առանց տրամաբանական հերթականութեան:

«Քրիստոսի մայր» լինելուց բացի Տիրամայրը մեծացուցէներում ներկայանում է որպէս *«մայր կուսութեան»* (Շ., էջ 40), այսինքն՝ կոյս լինելով հանդերձ՝ մայր, ու բնականաբար, *«պարծանք կուսութեան մարդկան»* (Շ., էջ 36), քանի որ, ըստ Աւետիքեանի, հրէաները կուսական վիճակն անպատիւ էին համարում (զաւակ չունենալու պատճառով), իսկ Սուրբ Կոյսն այն պանծալի դարձրեց, քանի որ կուսութիւնը պահելով զաւակ ունեցաւ[7]: Նոյն տրամաբանութեամբ է Վերափոխման երկրորդ օրուայ կանոնի մեծացուցէն Տիրամօրը *«մայր անհարսնացեալ»* (Շ., էջ 478) կոչում:

Մի շարք շարականներ Սուրբ Աստուածածնին համեմատում են աղբիւրի հետ՝ անուանելով *«աղբիւր անսպառ լուսոյ»* (Շ., էջ 36), *«աղբիւր յորդառատ»* (Շ., էջ 675), *«աղբիւր կենաց»*[8] եւ այլն: Պէտք է նկատել, որ այս արտայայտութիւններն առանձնանում են մեծացուցէներում տեղ գտած հրամանակարգային այլ սահմանումներից (*«անկէզ մորենի»* (Շ., էջ 59), *«հիմն եկեղեցւոյ»*)՝ աչքի ընկնելով իրենց անկաշկանդուածութեամբ ու մտքի թռիչքով:

Մի շարք մեծացուցէներում Տիրամօրը բնութեան հետ նոյնացնելու, բնութեան երեւոյթների միջոցով ներկայացնելու ակնյայտ միտումներ են նկատւում: Օրինակ, քիչ առաջ մէջբերուած Յարութեան մեծացուցէներից մէկում Սուրբ Կոյսը համեմատւում է «պայծառ երկնքի» հետ, իսկ նոյն կանոնի մէկ այլ մեծացուցէ նրան անուանում է *«մաքուր աղաւնի»* (Շ., էջ 62), մէկ ուրիշ տեղ հանդիպում ենք *«անթառամ ծաղիկ»* (Շ., էջ 41-42) ու *«ամպ թեթեւ լուսաւոր»* (Շ., էջ 366-367)[9] արտահայտութիւնների եւ այլն: Այստեղ հարկ ենք համարում նշել, որ մենք մէջբերում ենք որեւէ մասնաւոր բնորոշման բազմաթիւ օրինակներից միայն մէկը: Վերջին «ամպ» բնորոշումը՝ տարբեր կիրառութիւններով հանդիպում է զանազան մեծացուցէներում. *«ամպ հովանի»* (Շ., էջ 49-50), *«ամպ լուսեղէն»* (Շ., էջ 59-60), *«ամպ լուսաւոր»* (Շ., էջ 473) եւ այլն:

Սուրբ Աստուածածնին շարականագիրները կոչել են *«երկնային դուռն»* (Շ., էջ 165) կամ *«դուռն երկնից»* (Շ., էջ 59-60) (բնորոշումն օգտագործում է նաեւ Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսը[10]), քանզի նրա միջոցով Քրիստոս՝ Երկնքի Արքան, իջաւ երկիր, եւ նրա միջոցով մարդիկ կարող են երկինք մտնել[11]:

Սուրբ Կոյսի մասին հնուց ձեւակերպուել են բնութագրումներ, որոնք ստեղծագործական որոշ փոփոխութիւններով գործածուել են հոգեւոր գրականութեան մէջ. «դրախտ աստուածատունկ», «այգի վայելուչ», «մորենի անկիզելի», «վէմ հաստատուն», «զաւազան ծաղկեալ», «սափոր ոսկի», «պարտէզ փակեալ» եւ այլն:

Մեծացուցէներում նշանակալից տեղ ունի Տիրամօրը տրուող «արեւելք» բնորոշումը.

---

7 Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Բացատրութիւն շարականաց, էջ 75:

8 Նոյն տեղում, կանոն Աւետեաց սուրբ Աստուածածնին, էջ 15: Սոյն բնորոշումն առկայ է նաեւ Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսի «Աստուածածնի գովեստ»-ում, տե՛ս **Գալուստ Տէր-Մկրտչեան**, Հայագիտական ուսումնասիրութիւններ, գիրք Բ, Ս. Էջմիածին, 1998, էջ 178, (այսուհետեւ՝ Հայագիտական ուսումնասիրութիւններ):

9 Այս բնորոշումն օգտագործել է նաեւ Սիւնեաց Պետրոս եպիսկոպոսը (տե՛ս Հայագիտական ուսումնասիրութիւններ, էջ 179):

10 Տե՛ս անդ, էջ 179:

11 Հմմտ. Բացատրութիւն շարականաց, էջ 101:

Աստուածածին խորան լուսոյ, անվայրապիակ արփւոյն կենաց, որ եղեր արեւելք արեգականն արդարութեան եւ նստեցելոցս ի խաւարի լոյս ծագեցեր, վասն որոյ ամենեքեան զքեզ միշտ մեծացուցանեմք (Շ., էջ 17):

Ցնծա, իմանալի արեւելք, քանզի քեւ ծագեաց մեզ լոյս երեւեաց Քրիստոս, լեր բարեխօս վասն անձանց մերոց (Շ., էջ 143):

Մէջբերուած առաջին շարականական հատուածում Քրիստոս որեւէ վայրով չսահմանափակուող կեանքի Արեգակն է: Տիրամայրը՝ Արեւելքը, որը ծնունդ է տալիս Քրիստոսին՝ որպէս խաւարի մէջ լոյս: Այլաբանական այս բնորոշումները խորթ չեն քրիստոնէական մտածելակերպին, որովհետեւ արեւելքը, համաձայն քրիստոնէական վարդապետութեան, այն կողմն է, որտեղից ակնկալւում է Քրիստոսի երկրորդ գալուստը: Այս մտածումն իր խոր կնիքն է թողել թէ՛ ժողովրդի կենցաղում, թէ՛ եկեղեցական ծիսաարարողակարգի եւ թէ՛ շխարհիկ մշակութային իրողութիւնների վրայ:

Երբեմն շարականագիրն այնպիսի արտայայտութիւններով է բնորոշել Տիրամօրը, որ յաճախ նոյնիսկ դժուար է որոշել, թէ արդեօ՞ք դրանք դաւանական ակունքներ ունեն, թէ ոչ: Յստակ է մի բան, համեմատութիւններն առնուած են յաճախ Սուրբ Գրքից եւ առաւելագոյնս արտայայտում են շարականագրի ցանկութիւնը՝ փառաբանելու Աստուածամօրը գերադրական աստիճանով: Օրինակ՝ *«ճանապարհ արքայութեան»* (Շ., էջ 59- 60), *«օգնական եւ շնորհ աշխարհի»* (Շ., էջ 64), *«միջնորդ օրինաց եւ շնորհաց»* (Շ., էջ 63-64) բնորոշումներից առաջինը մեզ կարող է յիշեցնել աւելի շատ Քրիստոսին, քան Տիրամօրը, երկրորդը կարծես թէ աւելի յարմար է Սուրբ Հոգուն, իսկ երրորդը՝ Սուրբ Յովհաննէս Մկրտչին, սակայն շարականագիրն այս արտայայտութիւններով բնութագրել է Տիրամօրը:

Ինչեւէ, Աստուածամայրը մեծացուցէ շարականների կենտրոնական կերպարն է: Նրան վերագրուած յատկութիւնները մեծաւ մասամբ իրենց վրայ կրում են մեր Եկեղեցու դաւանաբանութեան կնիքը: Որոշ բացառութիւններով հանդերձ՝ մեծացուցէները եզակի ստեղծագործութիւններ են, որոնց մէջ Սիոնի Դստեր կերպարի քննութիւնը չափազանց հարուստ նիւթ կարող է մատակարարել Հայ Առաքելական Եկեղեցու դոգմատիկ աստուածաբանութեան քիչ ուսումնասիրուած բնագաւառներից մէկին՝ մարեմաբանութեանը (Mariology):

Տիրամօրը բնորոշող արտայայտութիւններն անշուշտ սրանով չեն սահմանափակւում: Սուրբ Կոյսը մեծացուցէներում յաճախ կոչւում է նաեւ «տաճար». *«տաճար լուսոյ»* (Շ., էջ 285), *«տաճար ընդհանուր լուսոյն»* (Շ., էջ 59), *«տաճար արքութեան»* (Շ., էջ 116), *«անարատ տաճար»* (Շ., էջ 58), *«զանձնաւոր տաճար Աստուծոյ Բանին»* (Շ., էջ 21-22) եւ այլն:

Մեծացուցէներում Տիրամօրն ուղղուած որոշ գովեստի արտայայտութիւններ եզակի են եւ ի տարբերութիւն նախորդ օրինակների շարականներում չեն կրկնւում, օրինակ՝ *«խորհուրդ կենաց»* (Շ., էջ 59), *«ծառ կենաց»* (Շ., էջ 184-185), *«պարծանք եկեղեցւոյ»* (Շ., էջ 66), *«պարտէզ փակեալ աստուածպունկ եդեմ»* (Շ., էջ 213) եւ այլն:

Երկար կարելի է շարունակել մակդիրաւոր արտայայտութիւնների այս շղթան, սակայն այսքանով սահմանափակուենք, սոսկ աւելացնելով, որ մեծացուցէ շարականները Սուրբ Կոյսին նուիրուած բազմաթիւ տաղերի, ներբողեանների ու այլ ստեղծագործութիւնների կողքին, մնում են հայ միջնադարի լաւագոյն երաժշտաբանաստեղծական նմոյշներ: